

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

03 հունիսի 2022թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 19-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադյան

ՈՐԱԿԱՐԳՈՒՄ

- ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի բազայի վրա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Բժշկական կենսատեխնոլոգիայի բազային ամբիոնի ստեղծման հարցը: Զեկուցող՝ Ա. Սահյան
- ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի երկրորդ տարվա առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անուշ Արմենի Ռուկանյանի ատեսավորման հարցը: Զեկուցող՝ Ա. Հովհաննիսյան
- Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների մագիստրոսական և ավարտական աշխատանքների (հեռակա) թեմաների և դեկանատների հաստատման հարցը: Զեկուցողներ՝ Ա. Դադյան և Տ. Սարգսյան
- 3.1. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ թեմաների աշակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2023» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմբիությայի և ֆարմակագնոգիայի ամբիոնի վարիչ Հայարփի Սիմոնյանի կողմից ներկայացվող հայտի երաշխավորման հարցը:

ՔԱՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

- ՀՀ ԳԱՍ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի բազայի վրա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Բժշկական կենսատեխնոլոգիայի բազային ամբիոնի ստեղծման հարցը:

Հսկչին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի անդամ, ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս Ա. Սաղյանի հաղորդումը Բժշկական կենսատեխնոլոգիայի բազային ամբիոնի ստեղծման վերաբերյալ: Նա նշեց, որ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում բակալավրիատի մակարդակով դասավանդվում է «կենսատեխնոլոգիա», իսկ մագիստրատուրայում՝ «բժշկական կենսատեխնոլոգիա» առարկաները, որոնց շրջանակներում ուսանողներին ուսուցանում են կենսատեխնոլոգիայի հիմնարար և կիրառական դրույթները, ինչպես նաև՝ դեղերի հիմնական խմբերի ստացման կենսատեխնոլոգիական մեթոդները: Ընդ որում, լաբորատոր աշխատանքների և արտադրական պրակտիկաների գերակշռող մասը անց են կացվում ՀՀ ԳԱՍ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում:

ՀՀ ԳԱՍ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի փորձաարտադրական հնարավորությունները տրամադրվում են ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտին, որտեղ անց են կացվում ինստիտուտի մասնագիտական առարկաների լաբորատոր աշխատանքներն ու արտադրական պրակտիկաները, ավարտական և մագիստրոսական թեզերը, հետրուհական կրթական գործընթացները: Կենտրոնի առաջատար գիտնականները ակտիվ ներգրավված են Ֆարմացիայի ինստիտուտի կրթական ծրագրերում, իսկ ինստիտուտի որոշ դասախոսներ համատեղությամբ աշխատում են գիտաարտադրական կենտրոնի բազային, տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում: ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Դեղերի որակի հսկման վերլուծական լաբորատորիայի ժամանակից սարքավորումային բազան օգտագործվում է գիտաարտադրական կենտրոնի հետազոտական ծրագրերի իրականացման համար:

Այս համագործակցությունը գիտություն-կրթություն փոխարարքերության լավագույն օրինակն է, որը խթանում է միջազգային չափանիշներին համահունչ

«դեղագետ-պրովինցոր», «դեղագետ-տեխնոլոգ», «դեղագետ-հետազոտող» մասնագետներ պատրաստելու գործընթացներին, որոնք այսօր խիստ պահանջված են Հայաստանի Հանրապետությունում ֆարմինդուստրիայի զարգացման համար:

Հայաստանում բժշկական կենսատեխնոլոգիայի զարգացման անհրաժեշտությունը թելադրված է նաև մարդկության առջև պարբերաբար ծագող տարաբնույթ վտանգավոր մարտահրավերներով, ինչպիսիք են, օրինակ՝ COVID-19 և այլ վիրուսային ու բակտերիային համավարակները։ Դրանց դիմակայելու կարևորագույն ուղիներից է գիտակրթական մակարդակով բանհմաց դեղագետ/կենսատեխնոլոգ մասնագետների պատրաստումը, որոնք կտիրապետեն բավարար գիտելիքների վիրուսների և բակտերիաների արխիտեկտուրայի, ազդեցության մեխանիզմների և դրանց հակագդման հնարավոր ուղիների մասին։ Իսկ դա առաջին հերթին թելադրում է նոր, մրցունակ գիտելիքներով զինված երիտասարդ մասնագետների պատրաստում, ինչը ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կարևոր դրույթներից է։

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի բազայի վրա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի բժշկական կենսատեխնոլոգիայի բազային ամբիոնի բացման համար երկկողմանի առկա են բավարար նախադրյալներ։ Գիտաարտադրական կենտրոնում ստեղծված են սինթետիկ և կենսասինթետիկ ծագման մի շարք դեղանյութերի և պատրաստի դեղաձևերի փոքրածավալ արտադրություններ, առկա է ժամանակակից լաբորատոր և կիսաարտադրական տեխնոլոգիական սարքավորումների և գիտական ներուժի հզոր բազա և ավելի քան 15 տարվա արդյունավետ համագործակցության փորձ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի հետ։ Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ֆարմքիմիայի և Փարմակագնողիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրեն Ա. Մկրտչյանը, Ա. Ափոյանը, ովքեր կողմ արտահայտվեցին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի բազայի վրա ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Բժշկական կենսատեխնոլոգիայի բազային ամբիոնի ստեղծման հարցին։

Որոշեցին՝ (միաձայն) կողմ արտահայտվել ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտարտադրական կենտրոնի բազայի վրա ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի Բժշկական կենսատեխնոլոգիայի բազային ամբիոնի ստեղծմանը և սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդին:

2. **ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի երկրորդ տարվա առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անուշ Արմենի Ռուկանյանի ատեստավորման հարցը:**

Հսկեցին՝ ֆարմացիայի ինստիտուտի ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Անսահիտ Հովհաննիսյանը, ով հաղորդեց, որ հարցը քննարկվել է ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ընդլայնված նիստում (նիստ 7, առ 31.05.2022թ.), որին ներկա են գտնվել ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ս. Վարդապետյանը, գիտական և ներդրումային հարցերի գծով փոխառոքեն Ա. Մկրտչյանը, ֆարմքիմիայի և ֆարմակազնոլոգիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը: Ա. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ասպիրանտ Անուշ Ռուկանյանը ասպիրանտուրայում ուսուցման տարիներին հանձնել է միայն կրթական բաղադրիչի պարտադիր և ընտրովի դասընթացներից քննություններն ու ստուգաքնները և մասնակցել է միայն հետազոտական պրակտիկայի: Ա. Ռուկանյանը չունի տպագրված աշխատանքներ, չի մասնակցել գիտական սեմինարների, աշխատաժողովների և չի կատարել ատենախոսության պատրաստման աշխատանքներ: Հիմք ընդունելով ԵՊՀ «Կրեդիտային համակարգով հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 4-րդ կետը, Անուշ Ռուկանյանը չի երաշխավորվել ատեստավորման, քանի որ չի հավաքել պահանջվող կրեդիտները: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ա. Դադյանը, Ա. Մկրտչյանը, Հ. Սիմոնյանը, ովքեր ևս փաստեցին, որ ասպիրանտ Անուշ Ռուկանյանը ասպիրանտուրայում ուսուցման երկու տարիների ընթացքում չի հավաքել բավարար կրեդիտներ՝ երրորդ կուրս փոխադրվելու համար:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն) չատեստավորել ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի 2-րդ տարվա ասպիրանտ Անուշ Արմենի Ռուկանյանին:

**3. Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների մագիստրոսական
աշխատանքների թեմաների և դեկավարների հաստատման հարցը:**

Հսկին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրոսական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի ղոցենտ ք.գ.թ. Անի Դադայանին և ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ կենսաբժշկագիտության ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Տաթևիկ Սարգսյանին ովքեր հաղորդեցին, որ մագիստրոսական և հեռակա ուսուցման ավարտական աշխատանքների թեմաները և գիտական դեկավարները պետք է հաստատվեն զիտական խորհրդի կողմից: Այդ նպատակով երկու հանձնաժողովների կողմից հավաքագրվել են ինստիտուտի 3 ամբիոններում իրականացվող մագիստրոսական և ավարտական աշխատանքների վերնագրերը և դեկավարների ցուցակը: Ելույթ ունեցան նաև Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիայանը, Ֆարմքիմիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը, ովքեր նշեցին, որ մագիստրոսական և ավարտական (հեռակա) աշխանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի, թեմաները քննարկվել և հաստատվել են ամբիոններում:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի շրջանավարտների մագիստրոսական և ավարտական (հեռակա ուսուցման) աշխատանքների թեմաների և դեկավարների ներկայացված ցանկը:

4. Ընթացիկ հարցեր:

4.1.ՀՀ ԿԳՄՍՆ զիտության կոմիտեի և Խոալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող զիտական հետազոտությունների հայ-խոալական համատեղ թեմաների աշակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳՎ - ԻՀ ԱՀԽ - 2023» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիային Փարմակագնողիայի ամբիոնի վարիչ Հայարփի Սիմոնյանի կողմից ներկայացվող հայտի երաշխավորման հարցը:

Հսկին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և Փարմակոնոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ., ղոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանին, ով ներկայացրեց «Սինթետիկ ալֆա-ամինաթթուները և պեպտիդների վրա

հիմնված համակարգերը հակաքաղկեդային ռազմավարության մշակման համար» վերնագրով թեման և պատասխանեց հարցերին:

Նա նշեց, որ թեման ներկայացված է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Խտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-խտալական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ԻՀ ԱՀԽ - 2023» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Հ. Սիմոնյանի կողմից ներկայացված թեման՝ վերը նշված մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝
պ.գ.թ., դոցենտ



Ա. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
պ.գ.թ., դոցենտ

Ա. Վարդապետյան